


# Հայ Ժողովրդի Պատմոթյան Ուրվագծեր





## Ուրվածեր Իրանահայության Պատմության

- 1-Համառոտ ակնարկ Հայ Ժողովրդի Պատմությանը  
Եւ Իրանահայ համայնքների առաջացումը
- 2-Իրանահայ հասարակական-քաղաքական Եւ  
տնտեսական կյանքը
- 3-Իրանահայ մշակույթը
- 4-Իրանահայերի մասնակցությունը Իրանի  
պետական կյանքում

# Եղիկ Բաղդասարյան



# ԷՌԻԿ ԲԱՂԴԱՏԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ  
ՊԱՏՄՈՒՔԱՆ ԸՆԹԱՑՔԸ

## 1-Հայկական լեռնաշխարհը

Հայ ժողովրդի պատմական կյանքն ընթացել է այն երկրամսում, որը աշխարհագրության մեջ հայտնի է Հայկական լեռնաշխարհ կամ Հայկական բարձրավանդակ անունով։ Հայաստանի Հանրապետությունը կազմում է այդ երկրամասի հյուսիս-արեւելյան մասը։



# Էղիկ Բաղդասարյան

Լեռնաշխարհը ծովի մակերեւությից 1500-1800 մետր միջին բարձրություն ունի Եւ շրջակա երկրներից ավելի բարձր լինելով, կոչվել է «Լեռնային կղզի»: Դայկական լեռնաշխարհը հնում կոչվել է Մեծ Հայք, ի տարրերություն Եփրատից արեւմուտք գտնվող Փոքր Հայքի:

1-1- Հայոց լեռները.- Արարատ լեռան լայնածավալ հրաբխային զանգվածը, Մեծ Մասիս (հնում Ազատ Մասիս, 5156 մետր) Եւ Փոքր Մասիս (3914 մետր) գագաթներով, գտնվում է Հայկական լեռնաշխարհի համարյա կենտրոնում:

Վանա լճից ոչ հեռու, բարձրանում է Սիփան հրաբխային զանգվածը, որը հնում Նեխ-Մասիք էր կոչվում Եւ նրա գլխավոր գագաթը 4434 մետր բարձրություն ունի, Եւ հարավում միանում է Վիրխարի խառնարան ունեցող Նեմրութ գագաթին՝ 2919 մետր բարձրությամբ:

Ներկա Հայաստնում է գտնվում Արագած լեռան վիրխարի հրաբխային զանգվածը՝ 4095 մետր բարձրությամբ: Մյուս նշանակալից լեռներն են՝ Բյուրակնը, որը հնում Սրմանց էր կոչվում, 3650 մետր բարձրությամբ, Ծաղկանց լեռները, մինչեւ այժմ չհանգած հրաբխային գագաթով, որը հնում կոչվում էր Թոնդրակ՝ 3548 մետր:

1-2- Հայոց դաշտերը.- Հայաստանի լեռնապարերի միջեւ ընկած են մի շարք ինքնամփոփ ու բարձրադիր սարահարթեր, արգավանդ հովիտներ ու դաշտեր: Դրանցից նշանավոր են Եւ հայ ժողովրդի պատմության մեջ խոշոր տնտեսական դեր են խաղացել Արարատյան, Տարոնի կամ Մշո, Խարբերդի, Երզնկայի, Բագրեւանդի (Ալաշկերտի) Եւ Շիրակի դաշտերը:

Արարատյան դաշտում են գտնվում Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Վաղարշապատ, Դվին Եւ Երեւան մայրաքաղաքները




Ararat Mountains  
(Space photo)

# ԷՌԻԿ ԲԱՂԴԱՏԱՐՅԱՆ

1-3- Հայոց գետերը.- Հայկական լեռնաշխարհը Առաջավոր Ասիայի մեծ գետերի ջրաբաշխն է: Այստեղից են սկիզբ առնում Պարսից ծոցը թափվող Կուր որ Արաքս գետերը եւ դրանց բազմաթիվ վտակները: Եփրատը (Երկարությունն է 2700 կիլոմետր, որից 500 կիլոմետրը Հայկական լեռնաշխարհում), ունի երկու բազուկ՝ Արեւմտյան Եփրատ, որը սկիզբ է առնում Կարին քաղաքից հյուսիս՝ Ծաղկավետ լեռներից, եւ Արեւելյան Եփրատ կամ Արածանի, որ սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից: Արածանիի վտակներից է Մեղրագետը, որը հոսում է Տարոնի արգավանդ դաշտի միջով: Տիգրիս գետը (1950 կիլոմետր, 380 կիլոմետրը Հայկական լեռնաշխարհում): Արաքս գետը (հնում՝ Երասխ, 914 կիլոմետր) սկսում է Բյուրակնյան լեռների հյուսիսային լանջերից Արաքսից ու նրա վտակներից սկիզբ առնող ջրանցքների ու առուների ընդարձակ ցանցը կյանք է տալիս Արարատյան դաշտի խաղողի ու պտղատու այգիներին: Հայ ժողովուրդը այս գետը կոչել է Մայր Արաքս անունով: Մյուս գետերից կարելի հիշատակել՝ Հրազդանը, Ազատը, Ախուրյանը եւ Քասախը:

1-4- Հայոց լճերը.- Լեռնաշխարհը հարուստ է մեծ ու փոքր լճերով: Սեամա լիճը (հնում Գեղամա ), գտնվում է ծովի մակերեսությից 1900 մետր բարձրության վրա, մակերեսը 1256 քառակուսի կիլոմետր: Լիճն են թափվում մոտ 28 գետակ, իսկ նրանից սկիզբ է առնում միայն մի գետ՝ Հրազդանը (Զանգուն), լճի ջուրը քաղցրահամ է: Թկներից աչկի ան ընկնում իշխանը, կողակը եւ Սիզը: Վանա լիճը (հնում՝ Տոսպ կամ Բզնունյաց ծով) գտնվում է ծովի մակերեսությից 1720 մետր բարձրության վրա: Լճի մակերեսը հավասար է 3733 քառակուսի կիլոմետրի: Չուրը շատ աղի է: Այն հայտնի է Տառեխս ծկնով: Ուրմիա լիճ (հնում Կապուտան) մակերեսը մոտավորապես 5800 քառակուսի կիլոմետր է եւ նրա ջուրը շատ աղի է, ծկներ չկան: Բացի այս երեք լճերից կան եւ անուշահամ ջուր ունեցող բազմաթիվ լեռնային փոքր լճեր. դրանցից են՝ Արփին, Արճակը, Գայլատուն եւ այլն:

Եղիկ Բաղդասարյան



# Հոհե Բաղդասարյան

1-5- Դայոց լեռնաշխարհի բնությունը.- Լեռնաշխարհի երկրաբանական կազմությունը եւ կլիմայական բազմազանությունը ստեղծել են հողի ու քուսականության բազմազանություն. արգավանդ դաշտեր, այգեշատ առապարներ, հարուստ, անտառապատ սարալանջեր, մարգագետիններ: Լեռնաշխարհում մարդիկ զբաղվել են որսորդությամբ, հողագործությամբ, անասնապահությամբ եւ զանազան արհեստներով: Դնուց ի վեր բնակչության գլխավոր զբաղմունքն է եղել հացահատիկների, խաղողի վազի, քնջութի, ծիրանի, դեղձի, կեռասի, խնձորի, եւ այլ մրգատու ծառերի մշակությունը:

Դայկական լեռնաշխարհը հարուստ է վայրի կենդանիներով, որոնցից հարկ է հիշատակել ազնիվ եղջերուն, կխտարը, այծյամը, վարազը, վայրի ոչխարը, գայլը, աղվեսը, արջը, բորենին, արծիվը, անգղը, ուրուրը, բազեն, արագիլը, կաքավը, բաղը, արոսը, լորը, փասիանը եւ այլն:

Լեռնաշխարհի ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով որոնք են՝ պղինձ, երկաք, կապար, արծաթ, ոսկի, զանազան գույների տուֆ, բազալտ, կրաքար, քարաղ, մարմար, փերլիտ, մոլիբդեն եւ այլն: Այն հայտնի է նաև բուժիչ հատկություն ունեցող բազմաթիվ հանքային ջրերով «ջերմուկներով» ու թթու ջրերով:

Դայկական լեռնաշխարհով անցել են հին աշխարհի առեւտրական ու ռազմական կարեւորագույն մայրուղիներից երկուաը, որոնք կապել են Արեւելքը Արեւմուտքի հետ: Դրանց տիրանալու համար հարեւան ու հեռավոր պետությունները հաճախակի արյունահեղ պատերազմներ են մղել, որոնց բատերաբեմը սովորաբար եղել է Դայաստանը: Այդ գլխավոր ճանապարհների հանգուցակետն էր Արարատյան դաշտը: Դյուսիսի հետ Դայաստանը կապված էր Սեւ ծովի արեւելյան եւ Կասպից ծովի արեւմտյան ափերով անցնող ճանապարհներով:

Դին Դայաստանը՝ Մեծ Դայքը բաժանված էր տասնհինգ խոշոր նահանգների կամ «աշխարհների»: Դրանք են՝ Այրարատը, Վասպուրականը, Սյունիքը, Արցախը, Գուգարքը, Բարձր Դայքը, Տուրութերանը, Աղձնիքը, Շոփքը, Տայքը, Պարսկահայքը, Կորճեքը, Մոկքը, Պայտակարանը, Ուտիքը:



## 2- Հայ ժողովորի ծագումը

Մարդու ծագումը տեղի է ունեցել ավելի քան երկու միլիոն տարի առաջ: Ավելով նախամարդուց, մարդը իր դանդաղ, բայց աշխատանքային անընդմեջ գործունեության շնորհիվ հետզհետե ձեռք է բերել այսօրվա նկարագիրը: Հայկական լեռնաշխարհի ամենատարբեր մասերում հայտնաբերված են հինքարեղարյան մարդու գործունեության բազմաթիվ եւ հարուստ հետքեր՝ նրա պատրաստած ու կիրառած գործիքներ (Արտին լեռան Սատանի-դարում, Արեգունի լեռներում, Արգնիի մոտակայքում, Հարավային բլուրներում եւ այլուր): Այստեղ մարդու գործունեությունն անընդմեջ շարունակվել է հին քարի դարի (պալեոլիթ) բոլոր երեք՝ ստորին (սկզբից մինչեւ 100,000 տարի առաջ), միջին (100,000-ից մինչեւ 40,000 տարի առաջ), եւ վերին (40,000-ից մինչեւ մ.թ.ա. 12-րդ հազարամյակը):


Հայկական լեռնաշխարհում ձեւավորվել է գիտության մեջ «Արմենոիդ» կոչվող մարդաբանական տիպը: Մարդաբանական այս միջավայրում է տեղի ունեցել վերոհիշյալ հնադարյան մարդու մշակույթի ձեւավորումը եւ հատկապես այստեղ են հետագայում առաջացել Արեւելքի առաջին քաղաքակրթությունները: Քննելով հարցը մշակութային-պատմական տեսանկյունից, նորագույն հետազոտությունները համոզիչ կերպով ապացուցում են, որ հնագույն ժամանակներից ի վեր Հայկական լեռնաշխարհի տարածքում եղել եւ անընդմեջ զարգացել է մեկ միասնական մշակույթ:

Հաջորդ շրջանը՝ մ.թ.ա. 12-րդ հազարամյակից մինչեւ 7-րդ հազարամյակի կեսերը, անվանվում է միջին քարե դար՝ մեզոլիթ: Այս շրջանում գործածվում է նետ ու աղեղը, մարդը զբաղվում է երկրագործությամբ ու անասնապահությամբ: Քարե դարի եզրափակիչ շրջանը՝ նոր քարե դարը (նեոլիթը) Հայաստանում ներկայացված է մի շարք բնակավայրերով, որոնք թվագրվում են մ.թ.ա. 7-րդ հազարամյակի կեսերից մինչեւ 5-րդ հազարամյակի կեսերն ընկած ժամանակաշրջանով: Հայաստանի նորքարեդարյան շրջաններից են Շամիրամալթի, Թեղուտ, Ջլուլ-թափա եւ այլ բնակավայրեր:

Գտնվելով հին աշխարհի քաղաքակրթությունների խաչմերուկում, Դայաստանն ստեղծել է բավական բարձր մշակույթ, որը հիմք է ծառայել հետագա դարերի հայկական մշակույթի զարգացման համար: Այլ կերպ ասած, Դայկական լեռնաշխարհը մարդու կյանքում հայտնաբերվում է էրնիկական, տնտեսական եւ մշակութային գործեր հինգ հազար տարվա (մինչեւ մեր թվականությունը եւ ընդհուազ մինչեւ մեր օրերը) ժառանգություն:

Վերջին տարիներին գիտնականներ Թամազ Գամղրելիձեն ու Վյաչեսլավ Իվանովը առաջ են քաշել մի նոր տեսություն, որի համաձայն հնդեվրոպական լեզվով խոսողները մ.թ.ա. V եւ IV հազարամյակների սահմանագծում ապրել են Դայկական լեռնաշխարհում: Գիտնականները համոզիչ փաստարկներ են բերել հօգուտ իրենց դրույթի, հենվելով լեզվաբանական, պատմական, հնագիտական հսկայական նյութի վրա, օգտագործելով հնագույն ժամանակների վերաբերյալ շատ այլ գիտությունների տվյալները: Սա հնարավորություն է ընծեռում այլ կերպ դիտել հայերի ազգածնության հարցը: Պարզվում է, որ այն հեռավոր ժամանակաշրջանում է ծագել լեզվաբանների կողմից վերակառուցված նախահայերենը, որի անմիջական ժառանգորդը մեր ժամանակակից հայերենն է, որում եւ մանավանդ նրա բարբառներում զարմանալիորեն մինչեւ օրս էլ պահպանվել են այդ հնագույն լեզվի հետքերը:

# ԷՌԻԿ ԲԱՂԴԱՏԱՐՅԱՆ



Գիտության տվյալները ցույց են տալիս, որ ոչ միայն հայոց լեզուն է համարվում հնդեվրոպականի անմիջական ժառանգորդը, այլև հայերն իրենք առաջին հնդեվրոպացիների անմիջական ժառանգորդներն են: Ա.թ.ա. V-IV հազարամյակներին (երբ կազմավորվել է

# ԷՌԻԿ ԲԱՐԴԱՏԱՐՅԱՆ

Եվրոպեոիդ ցեղի մարդաբանական տիպը վերաբերվող տվյալները վկայում են, որ նրա ամենատիպիկ ներկայացուցիչները հայերն են: Այդ ժամանակաշրջանում Փոքր Ասիայի, Հայկական լեռնաշխարհի, Հյուսիսային Միջագետքի եւ Իրանական սարահարթի հյուսիսարեւմտյան հսկայածավալ տարածքում ապրել են ցեղեր, որոնք խոսել են հնդեվրոպական նախալեզվով: Արդեն այն ժամանակ տեղի էր ունենում ազգակից բարբառների տարանջատման գործընթացը, որոնց հիման վրա այնուհետեւ առաջացան հնդեվրոպական լեզուները:

Նյութական բազմաթիվ վկայությունները, լեզվական փաստերը, հնագույն առասպելներն ու ավանդությունները, այս ամենը ժամանակակից գիտությանը հիմք են տալիս ամենայն համոզվածությամբ ապացուցել, որ հայերը Հայկական լեռնաշխարհում տեղաբնիկներ են եղել: Ինչպես պնդում է անգլիացի հետազոտող Ու. Օլքոթը, Հայկական լեռնաշխարհի հետ է կապված մ. թ. ա. 3-րդ հազարամյակում կենդանակերպի 12 համաստեղությունների մասին ծնված հասկացությունը, որը հիմք դրեց օրացույցի արեգակնային համակարգի զարգացմանը:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակում Հայկական լեռնաշխարհում ձեւարվել էին խոշոր եւ կայուն ցեղային միություններ, սկսվել էր հայ ժողովրդի կազմավորման ընթացքը: Հայ ժողովուրդը ծագել ու կազմավորվել է Հայկական լեռնաշխարհում հնուց ի վեր բնակվեղ մի շարք ցեղերի ու ցեղախմբերի աստիճանական միաձուլման եղանակով: Լեռնաշխարհի հարավային գոտին բնակեցված է եղել խուրրի-ուրարտական իրար ազգակից ցեղերով: Այժմ տեսնենք որոնք են եղել հայ ժողովրդի կազմավորմանը մասնակցող տարրերը եւ նրանց ստեղծած ցեղային միություններն ու պետությունները.

- 3-2- րդ հազարամյակմերի սահմանից սկսած Հայկական լեռնաշխարհի արեւմտյան շրջանները բնակեցված էին հնդեվրոպական խեթական եւ լուվիական ցեղերով: Նրանք մ.թ.ա. 17-րդ դարում ստեղծեցին Խեթական պետությունը, որը գոյատեւեց մինչեւ մ.թ.ա. 12-րդ դարի սկիզբը:

- Մ.թ.ա. 16-14-րդ դարերում, խուրրիները Հյուսիսային Միջագետքում, ստեղծեցին իրենց Միտանի պետությունը Վաշուգանե մայրաքաղաքով:

# ԷՌԻԿ ԲԱՐԴԱՏԱՐՅԱՆ

- Մ.թ.ա. 15-13-րդ դարերում, Գալ գետի ու ճորոխի վերին հոսանքների շրջանում եւ Շայկական լեռնաշխարհի Բարձր Շայք Երկրամասում տեղավորված Շայասա-Ազգի ցեղային հզոր միությունը:

- Մ.թ.ա. 13-րդ դարում Վանա լճի ավազանի եւ նրանից դեպի Ուրմիա լիճը ձգվող շրջաններում գոյություն ուներ Ուրատրի կամ Ուրուատրի անվանված ցեղային միությունը, բաղկացած ութ ցեղերից եւ նրանց զբաղեցրած Երկրներից: Ասորեստանի Սալմանասար Ա թագավորը (մ.թ.ա. 1280-1261) արշավում եւ ավերում է Երկիրը, դրանից հետո Ուրատրի միությունը լուծվում է:


- Մ.թ.ա. 13-րդ դարում Ուրատրիի տեղը գրավում է ավելի հզոր Նաիրի ցեղային միությունը, որը զբաղեցնում էր Շայկական լեռնաշխարհի մի խոշոր մասը՝ տարածվելով մինչեւ մերձսեւծովյան շրջանները, ճորոխի հովիտը: Ասորեստանյան թագավորները հիշատակում են մինչեւ 60 նաիրյան թագավորների մասին: 11-րդ դարում Նաիրի միությունը տրոհվում է եւ նորից հանդես է գալիս Ուրատրին, որը շուտով վերածվում է Արարատյան կամ Վանի թագավորությունը, որը ասուրա-բաբելական աղբյուրներում Ուրարտու կամ Ուրաշտու է կոչվել:

- Մ.թ.ա. 12-րդ դարի սկզբներին Շայկական լեռնաշխարհի հարավային հողերի վրա, ստեղծվել է Արմե-Շուպրիա ցեղային միությունը:

Ուրարտական եւ Ասուրական աղբյուրներում հիշատակվել են այ ցեղեր, որոնցից կարելի է նշել Դայա կամ Դայաուխի խոշոր ցեղային միությունը՝ հետագա Տայք հայկական նահանգի տարածքում եւ Եթուկի լայնատարած ցեղային միությունը, որը ընդգրկում էր մոտավորապես Կարսից մինչեւ Սեւանա լիճը ընկած տարածքը:

## Հայկական լեռնաշխարհի ցեղային միութիւնները


- Ա.թ.ա. 5000-4000թթ. Հնդեւրոպական
- Ա.թ.ա. 3000-2000թթ. Խեթա-Լուվիական
- Ա.թ.ա. 17-12-րդ դդ. Խեթական պետ.
- Ա.թ.ա. 16-14-րդ դդ. Միտանի պետ.
- Ա.թ.ա. 15-13-րդ դդ. Հայաստ-Ազգի
- Ա.թ.ա. 13-11-րդ դդ. Նախրի
- Ա.թ.ա. 13- 9 -րդ դդ. Ուրաստի
- Ա.թ.ա. 12-րդ դ. Արմե-Շուպրիա



# Արարատյան թագավորություն

## (մքա 860-590)

- Արամե - 860-810, մայրաքաղաքը Տուշպա
- Մենուա - 810-786 – կառուցեց Շամիրամի ջրանցքը 90 կմ.
- Արգիշտի Ա - 786-760, 782 թ. հիմնեց Էրեբունին
- Ուսւա Գ - 605-590 վերջին թագավորը, պետությունը վերացավ մարրերի ձեռքով:
- Ուարտուն ուներ սեպազիր գրեր:
- Հայոց նահապետ Պարույրը օգնեց մարրերին Նինվեն գրավելել համար, 612 թ. մքա:



# Երվանդյան թագավորություն


(մքա 6-րդ դարի կեսերը-3-րդ դարի վերջը)

- Երվանդ Սակավակյացը հիմնադրեց Երվանդունի տոհմը, մայրաքաղաքը Տուշպա
- Երվանդի որդի Տիգրանը պարսից Կյուրոսի ընկերը

## Արտաշեսյան թագավորություն (մթա 189-մթ 1)

- Արտաշես Ա 189-160 , հիմնադրեց թագավորությունը,  
մայրաքաղաքը Արտաշատ:
- Տիգրան Մեծ մթա 95-55, մայրաքաղաքը Տիգրանակերտ:
- Տիգրան Մեծը գրավեց մինչեւ բեյրութ և Եկբարան:
- Հայկական բանակը նրա ժամանակ 300,000 իսկ բուն հայկական զորքը  
100,000, թագավորական ընտիր հեծյալ թիկնապահ գունդը 6000
- Հայաստանի թագավորները մթ 1-61 որոշվում էին Հռոմի կողմից

# Էնիկ Բաղդասարյան



Հայութական պետության (Հռոմեական հոգության մասնաւորացների) մ.թ.ա. 93–66 թթ.)

Հայութական ժամանելուվորական գրաված երկրամասերի

Այս հայրական պետության (մ.թ.ա. 66–37 թթ.) ըստ Տիգրանի Բարեկամության մասնաւորացների մասնաւորացների

Դանունդ առաջնորդության (մ.թ.ա. 37–66 թթ.) ըստ Տիգրանի Բարեկամության մասնաւորացների

Կերինիական նովագումանի հայութական տակածը և տարածքը

**ՊՈԽՏՈՒ** Առավել պատշաճընքի

**ԿՈՄՄԱՆ** Կայսերական պատշաճընքի

**ԵՄԵՐԱ** Մարտական պատշաճընքի

**ԱՊՈՐԻ** Սատուրացական պատշաճընքի

**ԱՎԱՋԱ** Տաճարացական պատշաճընքի

**ԼԵՐԵ** Տեղային տարածքների

**ԲԱԱԱԱԱՑԵՐ**

**ԱՐՏԱՅԱ** Սայառաբարենի

**Հարիսա** Խորհրդաբարենի

**Կատառապատ** Այլ բարաբարենի

**Ցողացիր** Այլ բարապատընքի


**Բազար** Բազարանի բարապատընքի

**Բարապատ** Տախարաբարենի բարապատընքի

**Բարապատ** Բարապատընքի բարապատընքի

**Բարապատ** Բարապատընքի բարապատընքի


**Բարապատ** Տախարաբարենի բարապատընքի



# Արշակունյաց թագավորություն

## (61-428թթ)

- Հիմնադիրը՝ Տրդատ Ա (61-78), Պարեւ Վաղարշ Ա-ի եղբայրը:
- Հայաստանի անկախությունը հաստատվեց 64 թ. Հռանդիայի դաշնագրով, մայրաքաղաքը Վաղարշապատ, Հայ Արշակունիները 185թ. (Վաղարշ II 185-198):
- 301 թ. Քրիստոնեությունը Հայաստանի պաշտոնական կրոն, Տրդատ Գ-ի ժամանակ, մայրաքաղաքը Արտաշատ:
- Հայերեն այբուբենի գյուտը 405 թ. հանձինս Մ. Մաշտոնցի,  
Վռամշապուհի ժամանակ:
- 387 թ. Հայաստանի առաջին բաժանումը, Հռոմի եւ Պարսիկների միջեւ:
- 451թ. Ավարայրի ճակատամարտը



## բազրատունիների թագավորություն

(886-1045 թթ)

- Հիմնադիրը Աշոտ Ա (886-890)
- 11-15 դդ. Սելջուկները, Թաքարները, Մոնղոլները, Կարա-Կոյունլու եւ Ակ-Կոյունլուները Հայաստանում:

## Կիլիկիայի հայկական թագավորությունը

ա- Ուորինյան հարստություն - 1080-1226

բ- Հեթումյան հարստություն - 1226-1342

գ- Լուսինյան հարստություն - 1343-1375


# Ուրվածեր Իրանահայոթյան Պատմության

1- Իրանահայ համայնքների առաջացումը

Էնիկ Բաղդասարյան



Եղիկ Բայրամարյան



- Հայ-Իրանական հարաբերությունները հազարամյակների պատմություն ունի
- Իրանում Հայերը եղել են դեռեւս մքա 6-դ դարից, զորամասեր, առեւտրական, արհեստավորներ
- Որպես բնիկներ, Աստրատականում կամ պատմական Պարսկահայրում եւ Փայտակարանում – Թավրիզ Մարանդ, Ուրմիա-Կապուտան, Խոյ, Հեր, Մարաղա, Սալմաստ-Զարեւանդ, Մակու-Արտազ, Ղարադադ-Փայտակարան
- Հայկական խոշոր բոնագաղթեր (մի քանի հարյուր հազար) իրականացել են。
  - մը 3-րդ դարում, Սասանյան Արտաշիր թագավորի կողմից
  - մը 4-րդ դարում, Սասանյան Շապուհ II թագավորի կողմից
- Հայաստանում, քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո իրանահայկական հակամարտությունն սրվեց եւ ստացավ կրոնական գունավորում։ Այդ պատերազմների բուն նպատակն էր տարածքային հարցերը, ինչպես եւ Հայաստանի տարածքով անցնող միջազգային առեւտրական ճանապարհներին տիրանալը։

# ԷՌԻԿ ՀԱՅՐԱՍՏԱՐՅԱԾ

• 387-591-ին Հայաստանի մեծագույն մասը (4/5) ենթարկվել է Ի-ի քաղ. ազդեցությանը:

- Սասանա-բյուզանդական տիրապետության շրջանում (428-640 թթ.) եւս Հայաստանը պարբերաբար ասպատակել են պարսիկներն ու բյուզանդացիները, եւ մեծ թվով հայեր են գաղթեցվել այդ երկրներ:
- 7-րդ դարի սկզբներին Իրանն ընկավ Արաբական խալիֆայի տիրապետության տակ, նրանք բուն տեղի ժողովրդի հետ մեկտեղ, ընդունելով մեհմեղականություն՝ ձուլվելով ու կորցրին իրենց ազգությունը:
- Իրանում հայ բնակավայրերի նոր օջախներ սկսեցին ստեղծվել 11-րդ դարից՝ սելջուկ-մոնղոլների արշավանքների հետեւանքով:
- Այդ խոշոր գերեվարությունը Հայաստանից Իրան կատարել են սելջուկները 1048 թվականին:
- Հստ Մատթեոս Ուռհայեցու տեղեկության, սելջուկները 150.000 հոգի կոտորելուց հետո այդ թվով էլ հայ ազգաբնակչություն են գերեվարում եւ քշում Իրան: բացի այդ, հայկական պետականության անկումից հետո՝ 11-րդ դ. Մակուի, Խոյի, Սալմասի, Ուրմիայի, Ղարաբաղի եւ այլ նահանգների հայկական շրջանները մտան Իրանի պետության կազմի մեջ:

# Էղիկ Բաղդասարյան

- Արդեն 11-14-րդ դարերում հայկական բնակավայրեր կային Թավրիզ, Մարաղա, Ռաշտ, Սուլթանիկ քաղաքներում եւ Իրանի մի քանի այլ մարզերում:
- 12-րդ դարում արդեն Իրանում այնքան մեծաթիվ էր հայ բնակչությունը, որ հայկական երկու խոշոր թեմեր են ստեղծվել՝ Ատրպատականում, Հեր եւ Զարեւանդի թեմ եւ Սալմաստի ու պարսկական մայրաքաղաքի թեմ: Տեղեկություններ կան, որ այդ երկու թեմերի առաջնորդները մասնակցել են 1174 թվականին Հռոմեական կայսերական գահի հանձնության ժամանակ:
- Իրանահայ գաղթականության դրությունը զգալի չափով բարելավվում է Մելիք շահի գահակալության ժամանակ (1072-1092): Նա բարյացակամ վերաբերմունք ցուցաբերեց հայերի նկատմամբ, որի մասին անդրադարձել է Մ. Ուոհայեցին:
- Մոնղոլների՝ Հայաստանում կատարած ամենից մեծ գերեվարությունը տեղի է ունեցել 1236-1237-ին, ապա 1340 թվականին :
- 13-րդ դարում, առեւտրական տարանցիկ Ծանապարհները հարավից տեղափոխվում են հյուսիս: Այդ Ծանապարհները Թավրիզի վրայով անցնում էին Տրավիզոն եւ Այսու:

# Եղիկ Բաղդասարյան

- Մայր հայրենիքում ստեղծված ծանր պայմանները ստիպում են բազմաթիվ հայ առեւտրականների եւ արհեստավորների տեղավոխսվել եւ հաստատվել Իրանի քաղաքներում, ուր գործունեության ավելի լայն ասպարեզներ էին բացվում իրենց առջեւ:
- Մոնղոլական տիրեպատության շրջանում ստվարաթիվ գաղթօջախներ են ստեղծվում Թավրիզում, Սուլթանիեում, Մարանդում, Խոյում, Սալմասում, Մարաղայում, Ուշտում եւ այլ քաղաքներում: Տեղեկություններ կան, որ բազմաթիվ հայեր եւ քրիստոնյա այլ ժողովուրդներ են ապրել Ույ քաղաքում:
- Հյուսիսային տարանցիկ ճանապարհի վրա հաստատված քաղաքներից ամենից խոշոր հայաշատ կենտրոնն է հանդիսացել Թավրիզը:
- Մարկո Փոլոն, որը 1271 թ. եղել է Թավրիզում, ամենից առաջ հիշատակել է հայերին:
- Մեզ հասած մի տեղեկության համաձայն, Թավրիզը 16-րդ դ. ըսնեցել է 700 տուն բնակչություն՝ 12 եկեղեցիներով:
- 14-15 դարերում Թավրիզում այնքան շատ հայեր են կենտրոնացված եղել, որ 1345 .թ գրված հայկական մի ձեռագրում, Թավրիզը համարվում է ոչ միայն Ֆարսերի (պարսիկների), այլեւ հայերի մայրաքաղաք

# Եղիկ Բարոկկօսարյան

- 13-15-րդ դդ. կաթոլիկ քարոզիչները լիքն էին պարսկահայ գաղթօջախներում: Վատիկանը քարոզական երեք կենտրոն է ստեղծել Իրանում՝ Թավրիզում, Մարաղայում եւ Սուլթանիեում: Նա 1330 թ. հռոմադավան հայության համար եպիսկոպոսական թեմ հիմնեց Իրանում՝ նստատեղ ընտրելով Սուլթանիեն: Առաջին թեմական առաջնորդն է հանդիսացել Հովհաննես Կոր (Jean de cor) արքեպիսկոպոսը:
- 14-15-րդ դարերում իրանահայ խոշոր գաղթօջախ էր հաստատված Սուլթանիեում, որը հիմնվել էր Էլիան Արղունի (1284-1291) կողմից Զենջանի եւ Ղազվինի միջեւ:
- 14-15-րդ դդ. հայկական մեծ թվով բնակչություն է ունեցել նաև Խոյ քաղաքը: Խսպանիայի Շահնապարհորդ Կլավիխոն, որը 1405 թ. եղել է Խոյում, իր ուղեգրության մեջ հայտնում է, որ այդ քաղաքի ֆրանակչության մեծ մասը հայ ցեղից էն»: Նա նույնապես հիշատակում է Մակուի հայկական խոշոր գաղթօջախի մասին: Նա հայտնում է, որ 1405 թ. գիշերել է Մակուի բերդում, որի իշխանը, ինչպես բերդը պաշտպանող զինվորները, կաթոլիկ հայեր են եղել:
- Ստվարաթիվ հայ բնակչություն գոյության է ունեցել Մարաղաում, նաև Սարմաստ քաղաքում եւ նրա շրջակա գյուղերում, նաև Ուշտում: Այստեղ 1494 թ. գոյություն է ունեցել <Հակոբ հայրապետի> անունով հայոց եկեղեցի:

# Եղիկ Բաղդասարյան

- Խոշոր հայկական գաղթօջախ գտնվել է Ուրմիայում, որի հայ բնակչությունը հիմնովին տուժել է 1425 թ. Իսկենդերի վայրագությունների հետեւանքով:
- Հայ ազգաբնակչության գերեվարումը շարունակվում է նաև Լեռկ Թեմուրի ասպատակումների ընթացքում (1386, 1387, 1395, 1396, 1399), որոնց զգայի մասը տարվում է Խորասան:
- Սեֆյան հարստության հիմնադիր շահ Իսմայիլի գահակալության շրջանում է հիմնվել Սպահանի հայ գաղթավայրը: Միալ է այն կարծիքը, որ իբրև թե Սպահանի հայ գաղթօջախը ստեղծվել է Շահ Աբբասի բռնագաղթի շնորհիվ:
- Ուշագրավ է այն, որ Սեֆյան հարստության հիմնադիր Իսմայիլը, Փոքր հասակում, ապաստանել է Աղթամար եւ իր դաստիարակութունը ստացել այնտեղ :
- 1514 թ. օգոստոսի 21-ին Չալդրանում սուլթան Սելիմի եւ շահ Իսմայիլի բանակների միջեւ տեղի ունեցող կռվի ժամանակ, երբ պարսիկները պարտություն կրեցին, քուրքական զորքերը առաջանալով մտան Թավրիզ եւ այստեղից գերի տարան 3000 հայ արհեստավորների իրենց ընտանիքներով:
- 1603 թվականին պարսկական զորքը, Շահ Աբբասի գլխավորությամբ անցնում է Արաքսը եւ մտնում Ջուղա:

# Եղիկ Բաղդասարյան

- Երեւանը գրավելուց հետո, Շահ Աբբասը տեղեկանալով զորաբանակի առաջխաղացման մասին, Սինան Փաշայի հրամանատարությամբ, որոշում է իրագործել իր ծրագիրը՝ հայերին բռնի գաղթեցնել Իրան:
- **Այդ քայլը Շահ Աբբասը օգտակար էր համարում երկու տեսակետից. նախ՝ ամայի ընդարձակ տարածություն կատեղծեր արշավող թուրքական բանակի առջեւ ու դրանով կոժկարանար նրա պարենավորումը, եւ ապա՝ հայ գաղթականությունը Իրան տեղափոխելով նպաստած կլիներ իր երկրի տնտեսական կյանքի զարգացմանը:**
- Իրան տարվող բազմահազար հայ բնակչության զգալի մասը ոչնչանում է:
- բռնազարդած հայ բնակչությունը իր գաղթի տարբեր Փուլերի ընթացքում հաստատվում է Իրանի զանազան շրջաններում՝ Քաշանում, Ղազվինում, Գիլանում, Էնգելիում, Սպահան քաղաքի գավառներում՝ Լճանում, Ալինջանում, Գանդիմանում եւ Զդախոն, Փերիա ու՝ ուրվարի, Քյազազ, Քյամարա, ԳաՓլա եւ Ղարաղան, Շիրազ, Զարմահալ, Մազանդարան, Համադան եւ այլն: Հիմնվում է Նոր Ջուղան:
- Հայաստանից Իրան տարված բնակչության թիվը 300,000 – 500,000:
- 17-րդ դարում դարում եւ 18-րդ դ. խկզբին Նոր Ջուղան դարձավ Իրանի հարավում ապրող հայերի թեմական կենտրոն, ինչպես նաև մշակութային կարեւոր օջախ անմբողջ գաղութի համար:

[www.Edic-Baghdasarian.com](http://www.Edic-Baghdasarian.com)

Եղիկ Բաղդասարյան

# ԷՌԻԿ ԲԱՂԴԱՏԱՐՅԱՆ

- 18-րդ դ. 20-ական թվականներին աֆղանների արշավանքի հետեւանիքով Նոր Չուղայի կյանքը ապրեց խոր անկում: Ուստի հայ բնակչության զգալի մասը, հատկապես ապահովված, հարուստ խավը հեռացավ, առավելապես Հնդկաստան, Իրաք եւ արաբական այլ երկրներ, ինչպես եւ Ռուսաստան:
- Անգլիացի միսիոներ՝ Հանրի Մարթինի վկայությամբ (22 մայիս 1711 թ.) հայկական գաղութ է գոյություն ունեցել Պարսից Ծոցի աՓերում գտնված բուշեհրում, ինքը այդ թվականին հյուր է լինում մի հայ ընտանիքի: 1711 թ. հայերը բուշեհրում ունեցել են եկեղեցի եւ քահանա:
- Նոր Չուղայի վաճառականները երբ սկսեցին Հնդկաստանի հետ իրենց առեւտրական հարաբերությունները, գտնվեցին բանդար Արքասից, սակայն 1763 թ., երբ անգլիացիները հեռացան այդ նավահանգստից, հայ առեւտրականներն է հետեւելով նրենց բուշեհր հաստատվեցին:
- Այդ տարիներին տեղաշարժեր եղան նաև հայ գյուղական բնակչության մեջ: Նոր Չուղայի հարակից Լնջան եւ Ալիջան շրջաններում ապրող բոլոր հայ գյուղացիները տեղափոխվեցին դեպի արեւմուտք ու հարավ-արեւմուտք՝ Փերիայի, բուրվարիի եւ Չհարմահալի շրջանները: Հաջորդ տասնամյակում հայ գյուղացիների շատ ընտանիքներ՝ ուրվարի եւ ԳյաՓլա շրջաններից անցան հարեւան Քյամարա եւ Քյազազ շրջանները:

- Իրանի հայ բնակչությունը ծանր վիճակում է գտնվել 18-րդ դարի երկրորդ կեսին, միջ-Ֆեռնալական ընդհարումների ակտիվացման ժամանակաշրջանում, եթե 1747 թվականին սպանվեց Նադիր Շահը:
- 1753 թվականին Սպահանի եւ Նոր Ջուղայի վրա դրված է եղել 60.000 քուման արտակարգ հարկ:
- Օգոստինյան եւ Կարմեղյան միսիոներականի գործունեությունը 18-րդ դարում :
- 19-րդ դ. 20-30-ական թվականներին իրանահայ զաղութք ենթարկվեց նոր ՓոՓոխությունների: 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Արեւելյան Հայաստանի մի մասը Ուստաստանին միանալուց հետո, մոտ 45 հազար հայեր դուրս եկան Իրանի հյուսիսային նահանգներից եւ բնակություն հաստատեցին Երեւանի եւ Նախիջևանի նահանգներում:
- Իրանում մնացած հայերը գլխովրապես բնակվում էին հարավային եւ Հյուսիսային նահանգներում: Հարավարենակ հայերի կենտրոնը շարունակում էր մնալ Նոյր Ջուղան: Նրան էին ենթարկվում Փերիա, Քյարվանդ, Չհարմահալ, բուրվարի, Համադան, Շիրազ քաղաքների հայաբնակ օջախները:

- 1833 թ.-ից հյուսիսային նահանգներում բնակվող հայերի կենտրոնը դառնում է Թավրիզը: Մինչ այդ Մակուի շրջանում գտնվող Թաղեի վանքին էր պատկանում առաջնային դերը: Այսուհետեւ Թավրիզը համարվում էր Խոյի, Մակուի, Սալմաստի, Ուրմիայի, Ղարաղաղի, Մարաղայի եւ այլ շրջանների հայերի կենտրոն:
- 19-րդ դ. երկրորդ կեսին Իրանահայ գաղութը շարունակեց աճել ավելի արագ քաՓով: Ստեղծվում են հայ նոր բնակավայրեր Մեշհեդում, Քերմանշահում եւ այլուր: 20-րդ դ. խկզբին, Իրանում նավթային արդյունաբերության զարգացման հետ մեկտեղ հայկական նոր օջախներ առաջացան երկրի հարավում՝ Աբաղանում, Ահվազում, Մեսջեդ-Սուլեյմանում եւ այլուր:
- 17-19-րդ դարերում հայ բնակչության մի մասը հարավային գավառներից Փոխադրվում է կենտրոնական գավառները, ստեղծելով մի քանի նոր հայկական բնակավայրեր: Տարագաղթման պատմական այս ընթացքի հետեւանքով Իրանի հայ գաղութը բաժանվեց երկու մասի՝ հյուսիսային (Թավրիզ կենտրոնով) եւ հարավային (Նոր Ջուղա կենտրոնով): Այս բաժանումը պահպանվում էր մինչեւ 20-րդ դարի 40-ական թվականները:

- Թեհրանի բնակչության աճին զուգընթաց խախտվեց զաղութի պատմականորեն ստեղծված այս բաժանումը: Դարիս 40-ական թվականներին ստեղծվեց կենտրոնական նոր շրջան, որի մեջ կենտրոն հանդիսացող Թեհրանի հետ մեկտեղ մտան նաև հարակից կենտրոնական, ինչպես նաև հարավ-արեւելյան եւ հյուսիս-արեւելյան գավառների հայկական բնակավայրերը:
- 1946 թ. մեծ ներգաղթ սկսվեց դեպի Խորհրդային Հայաստան: Ելնելով հայրենասիրական ձգտումներից հայերը աճապարանքով Թեհրան մեկնեցին՝ հայրենիք վերադառնալու նպատակով: Սակայն դա բոլորին չհաջողվեց եւ շատերը որոշ դժվարությունների պատճառով մնացին Թեհրանում եւ կազմեցին Թեհրանի ներկայիս հայ բնակչության մեծամասնությունը:
- Իրանահայ համայնքի իրավիճակը մեր ժամանակներում: